Կարգապահական գործ թիվ ԿԳ-16218

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի մարտի 30-ի թիվ 50-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/34-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԷԴԳԱՐ ԲԱԴԵՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սեդրակ Ասատրյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի, Տարոն Սիմոնյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Էդգար Բադեմյանին (արտոնագիր թիվ 1390) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Միքայել Մարաշյանը (այսուհետ նաև՝ Դիմող) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ՝ հայտնել է, որ երկու գործով դիմել է փաստաբան Էդգար Բադեմյանին (այսուհետ նաև Պատասխանող)՝ ընդհանուր նրան վճարելով 1.200.000 ՀՀ դրամ, որից ձևակերպվել է 700.000 ՀՀ դրամը:

Ըստ Դիմողի, առաջին գործով պայմանագրում հոնորարի չափը ճիշտ է նշվել 400.000 ՀՀ դրամ, սակայն երկրորդ գործով փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրում նշվել է 300.000 ՀՀ դրամ՝ 800.000 ՀՀ դրամի փոխարեն:

Փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրեր Դիմողին չի տրամադրվել: Դիմողը նշել է նաև, որ իր թղթերը փաստաբանը վերադարձրել է 23.04.2016թ-ին, որից հետո իրեն պարզ է դարձել, որ 07.09.2015թ-ին փաստաբանը միակողմանի որոշում է կայացրել դադարեցնելու իրենց միջև 04.12.2012թ-ին կնքված պայմանագիրը: Նման պայմաններում Դիմողի պնդմամբ փաստաբանը

պետք է հետ վերադարձներ պայմանագրի գնից 300.000 ՀՀ դրամ, ինչը չի կատարել:

Դիմողը նշել է նաև, որ վերաքննիչ բողոքը վերադարձվել է պետական տուրք վճարված չլինելու պատճառով, ինչի մասին ինքը նախապես չի իմացել, որ վճարի, ինչով պայմանավորված փաստաբանը նաև իրեն բարեխիղճ իրավական օգնություն չի ցուցաբերել:

Դիմողը խնդրել է կայացնել համապատասխան որոշում և պատասխանատվության ենթարկել փաստաբանին էթիկայի կանոնները խախտելու համար:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 07 նոյեմբերի 2016թ. 2իվ 453-Ա/ԿԳ-16218 որոշմամբ փաստաբան Էդգար Բաղեմյանի (արտոնագիր թիվ 1390) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.8.5 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով :

08.07.2016թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Տիգրան Մուրադյանին:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

3.1. <u>Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

06.10.2016թ. բողոքում Դիմողն, ըստ էության, նշել է, որ 04.12.2012թ. իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագրով սահմանված 300,000 ՀՀ դրամի փոխարեն ինքը վճարել է 800,000 ՀՀ դրամ, որի դիմաց Պատասխանող փաստաբանը պետք է իր շահերը ներկայացներ ՀՀ բոլոր դատական ատյաններում: Պատասխանողը միակողմանի դադարեցրել է պայմանագիրը, ուստի պարտավոր է վերադարձնել ծառայությունների չմատուցված մասի համար հոնորարի մի մասը, որի դիմաց աշխատանք չի կատարել:

<u>3.2 Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

15.12.2016թ. բացատրությամբ Պատասխանողն, ըստ էության, նշել է, որ 04.12.2012թ. պայմանագրով սահմանված 300,000 ՀՀ դրամից բացի ավել գումար չի վերցրել Դիմողից: Պատասխանողը, վկայակոչելով 04.12.2012թ. պայմանագրի 8.2 կետը, նշել է, որ Դիմողն իր գործողություններով վաղաժամ հրաժարվել է այդ պայմանագրից, որը դրսևորվել է վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի

գումարը չվճարելով: Ներկայացնելով 25.08.2015թ. ծանուցումը՝ Պատասխանողը նշել է, որ Դիմողին ուղարկել է ծանուցում, որպեսզի վերջինս վճարի թիվ ԵԷԴ/1597/02/12 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոքի համար պահանջվող պետական տուրքի գումարը, սակայն Դիմողը չի վճարել, և արդյունքում օրինական ուժի մեջ է մտել թիվ ԵԷԴ/1597/02/12 քաղաքացիական գործով 22.06.2015թ. վճիռը:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Պալատի կարգապահական գործ նախապատրաստողի կողմից 19.08.2016թ-ին կազմվել է եզրակացություն, որի համաձայն նախապատրաստողն ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում հաստատված է համարել, որ սույն կարգապահական գործով Դիմողը նախապես տեղեկացել է Վերաքննիչ դատարանի 14.08.2015թ. որոշման մասին, Պատասխանող փաստաբանի կողմից նախապես ծանուցվել է վերաքննիչ բողոքի համար պետական տուրք վճարելու անհրաժեշտության մասին, այն չվճարելու իրավական հետևանքների մասին, ինչպես նաև վերաքննիչ դատարանի 14.08.2015թ. որոշման դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար գրավոր համաձայնություն տալու մասին, սակայն նշվածներից ոչ մեկը չի կատարվել: Նախապատրաստողը գտնում է, որ այդ վարքագծով Դիմողը վաղաժամ հրաժարվել է պատվիրատուի ծառայություններից, ինչի պայմաններում Պայմանագրի 8.2 կետի հիմքով ստացած հոնորարի որևէ մաս ենթակա չէ վերադարձման: Նշվածից ելնելով՝ Նախապատրաստողը գտել է, որ Պատասխանողի վարքագծում բացակայում է Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի խախտումը:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի

եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

- 04.12.2012թ-ին Դիմողի և «ՆԵՎԸ ԳԻՎԱՓ» ՍՊ ընկերության միջև, որի անունից որպես տնօրեն հանդես է եկել պատասխանող փաստաբանը կնքվել է իրավաբանական ծառայությունների մատուցման մասին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):
- Պայմանագրի համաձայն Պատասխանողը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը ՀՀ բոլոր դատական ատյաններում, կապված Երևան քաղաքի Նոր Արեշ 50 փողոցի թիվ 36 տուն հասցեի անշարժ գույքի կապակցությամբ վեճերի, պատվիրատուի սեփականության իրավունքը ճանաչելու իրավահարաբերությունների հետ (հիմք՝ Պայմանագրի 1.2 կետ) :
- Ծառայություններն ենթակա են եղել մատուցման պատվիրատուի միջոցներով և նյութերով (հիմք՝Պայմանագրի 2.1.2 կետ)
- Պայմանագրի գին է սահմանվել 300.000 ՀՀ դրամ, որը ենթակա է եղել վճարման 12 ամիսների ընթացքում՝ առձեռն կամ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով (հիմք՝Պայմանագրի 3-րդ գլուխ)
- Պայմանագրով սահմանվել է, որ կատարողի ծառայություններից վաղաժամ հրաժարվելու դեպքում 3.1 կետում նշված և պայմանագրի լուծման պահին պատվիրատուի կողմից վճարված գումարը ենթակա չէ վերադարձման (հիմք՝ Պայմանագրի 8.2 կետ).
- 15.08.2013թ Դիմողի կողմից Պատասխանողին վճարվել է 200.000 ՀՀ դրամ (հիմք՝ 15.08.2013թ-ի դրամարկղային մուտքի անդորրագիր)
- 22.06.2015թ Դիմողի կողմից Պատասխանողին վճարվել է 100.000 ՀՀ դրամ (հիմք՝ 22.06.2015թ-ի դրամարկղային մուտքի անդորրագիր)
- Պատասխանողը Դիմողի համաձայնությամբ 21.07.2015թ «ՀՀ Էրեբունի և նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի ԵԷԴ/1597/02/12 գործով 22.06.2015թ վճռի դեմ» վերաքննիչ բողոք է ներկայացրել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան (հետայսու՝ Վերաքննիչ դատարան):
- Վերաքննիչ դատարանը 14.08.2015թ կայացրել է որոշում՝ վերաքննիչ բողոքը վերադարձնելու իսկ պետական տուրքի վճարումը տարաժամկետելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին:
- Վերաքննիչ դատարանը 14.08.2015թ որոշումը պատասխանողը փոստով ստացել է՝ 20.08.2015թ. (հիմք՝ որոշումն ամփոփած ծրարի հանձնման մասին ծանուցման վրա կատարված մակագրություն):
- 26.08.2015 թվականին Պատասխանողը Դիմողին է ուղարկել գրավոր ծանուցագիր, որով Դիմողին գրավոր տեղեկացրել է վերաքննիչ բողոք կրկին ներկայացնելու համար անհրաժեշտ պետական տուրք վճարելու մասին, ինչպես նաև իրազեկել է վերաքննիչ դատարանի 14.08.2015թ որոշման դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքի մասին՝ առաջարկելով կամ վճարել անհրաժեշտ պետական տուրք՝ կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու համար կամ տալ համաձայնություն վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք

ներկայացնելու համար (հիմք՝ «ՆԵՎԸ ԳԻՎԱՓ» ՍՊ ընկերության կողմից 25. 06. 2016թ թիվ ԵԼ-7-77-15 տրված ծանուցագիր և 26. 08.2015թ փոստային անդորրագիր):

- 07. 09. 2015թ Պատասխանողը միակողմանի լուծել է Պայմանագիրը (հիմք՝ «ՆԵՎԸ ԳԻՎԱՓ» ՍՊ ընկերության 07. 09. 2015թ թիվ ՆԳ-0612/15-1-7-77-15 որոշում):

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

ՀՀ Փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 29.03.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Պատասխանող Էդգար Բաղեմյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 14.02.2012թ (արտոնագիր համար 1390):

2012-2017թթ ընկած ժամանակահատվածում Էդգար Բաղեմյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանական պալատի նախագահի 07. 11. 2016թ. թիվ 453-Ա/ԿԳ-16218 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Գնահատելով գործում առկա ապացույցները, լսելով դիմողի բացատրությունը, հետազոտելով կարգապահական գործում առկա փաստաթղթերը և մյուս ապացույցներ, Պալատի խորհուրդը գտնում է, որ Պատասխանող Էդգար Բաղեմյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Կանոնագրքի 3.8.5 ենթակետի համաձայն.

«Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ 1) վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ,

.....»:

Սույն կարգապահական գործի շրջանակներում ձեռք բերված ապացույցներով հաստատվում է, որ Պատասխանողը վերաքննիչ դատարանի վերաքննիչ բողոքը վերադարձնելու որոշման մասին Դիմողին ժամանակին և պատշաճ կերպով իրազեկել է.

Դիմողի վերաքննիչ դատարանի որոշման մասին և վերջինիս կողմից ակնկալվող գործողություններ կատարելու անհրաժեշտության մասին իրազեկված լինելու փաստերի հաստատման, որպես արժանահավատ ապացույց է գնահատում 26.08.2015թ-ին Դիմողին ուղարկված գրավոր ծանուցագիրը, որով Պատասխանողը գրավոր պարզաբանել է կրկին վերաքննիչ բողոք ներկայացնելու համար պետական տուրք վճարելու անհրաժեշտության մասին, ինչպես նաև Վերաքննիչ դատարանի 14.08.2015թ. թիվ ԵԷԴ/1597/02/12 որոշման դեմ երկշաբաթյա ժամկետում վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորության

մասին՝ ակնկալելով Դիմողի արձագանքը: Հարկ է նաև նկատել, որ ուսումնասիրելով գործում առկա Պատասխանողի հեռախոսահամարի տվյալ ժամանակահատվածի համար զանգերի մանրամասն հաշվետվության տվյալները պարզ է դառնում որ 20.08.2015թ-ին Պատասխանողի և Դիմողի միջև տարբեր ժամանակահատվածում, մասնավորապես՝ ժամը 14:34-ի սահմաններում՝ 03 րոպե 56 վարկյան տևողությամբ, ժամը 14:49-ի սահմաններում՝ 04 րոպե 31 վարկյան տևողությամբ և ժամը 16:45-ի սահմաններում՝ 06 րոպե 08 վարկյան տևողությամբ տեղի են ունեցել հեռախոսային խոսակցություններ:

Կանոնագրքի 3.8.5 նորմի պահանջից բխում է, որ հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել ենթակա է վերադարձնման այն դեպքում, եթե կողմերի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Սույն գործով կողմերի միջև կնքված պայմանագրի եզրափակիչ մասում 8. 2 կետում սահմանված է, որ պատվիրատուն տվյալ դեպքում Դիմողը նախազգուշացվում է և տալիս է իր համաձայնությունը, որ պատվիրատուի կողմից կատարողի ծառայություններից վաղաժամ հրաժարվելու դեպքում պատվիրատուի կողմից վճարված գումարը ետ չի վերադարձվում:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ 04.12.2012թ-ին Դիմողի և «ՆԵՎԸ ԳԻՎԱՓ» ՍՊ ընկերության միջև կնքված պայմանագրի միակողմանի լուծման հիմք է հանդիսացել Դիմողի փաստացի անգործությունը, մասնավորապես պետական տուրքի վճարումը չկատարելը, ինչպես նաև վճռաբեկ բողոք բերելու Պատասխանողի գրավոր առաջարկի վերաբերյալ չհայտնելը, որի հետևանքով Պատասխանողի կողմից ծառայությունների հետագա մատուցումը դարձել է անհնարին:

Վերոնշյալ փաստական հանգամանքների առկայության պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ առկա չեն Պատասխանողին փաստացի չկատարած աշխատանքի դիմաց ստացած հոնորարը Դիմողին չվերադարձնելու համար պատասխանատվության հիմքերը:

Խորհուրդն, անդրադառնալով նաև դիմողի այն պնդմանը, որ Պատասխանողին թիվ ԵԷԴ/1597/02/12 քաղաքացիական գործով մատուցվող ծառայությունների համար փաստացի վճարել է 800.000 ՀՀ դրամ, մինչդեռ Պատասխանողի կողմից պայմանագրում որպես ծառայությունների գին նշվել է 300.000 ՀՀ դրամ, արձանագրում է, որ Դիմողը որևէ ապացույցով չի հիմնավորել պայմանագրում նշված գնից Պատասխանողին ավել գումար վճարելու փաստը, մինչդեռ Պատասխանողը վճարման անդորրագրերի միջոցով հիմնավորել է, որ Պայմանագրով ստանձնած ծառայությունների մատուցման համար Դիմողից ստացել է 300.000 ՀՀ դրամ գումար:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի,

«Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Տ՝

1. Փաստաբան Էդգար Բաղեմյանի **(արտոնագիր թիվ 1390)** ***նկատմամբ Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ 16218 կարգապահական վարույթը կարճել:***

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և Պատասխանողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Սիմոն Բաբայան